# 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 5.7 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայությունը, Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայությունը եւ եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարությունը,

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածին եւ 2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջեւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության 9-րդ

հոդվածին համապատասխան,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ներքոհիշյալի մասին.

**Հոդված 1**

2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջեւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) 3-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերության մեջ «Հավելվածում» բառը փոխարինել «4-րդ Հավելվածում» բառերով.

2) սույն արձանագրության Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի

յոթերրորդ տողը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| « | TotalGross-MassMeasure | Բոլոր ապրանքների համաքաշը, ներառյալ՝ փաթեթվածքը (կգ) Պարտադիր (1), տրամադրվում է միայն Վիետնամի կողմից | ds:GoodsMeasureGrossMass-MeasureType<br>Format-n.. 16,6 | + | + | | 0..1 | », |

յոթանասունչորսերորդ տողը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| « | AdditionalDocument | Տեղեկություններ փաստաթղթերի մասին Կամընտրական (0..*) | | + | + | | 0..* | », |

ութսուներկուերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| « | ValueAmount | Փաստացի վճարված կամ վճարման կամ այլ եղանակով հատուցման ենթակա | ds: CommodityValueAmountType<br>Format-n.. 16,2. | + | + | | 1 | ». |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արժեքը<br>Պարտադիր (1) | | | | | |

3) սույն արձանագրության Հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջեւ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջեւ ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության

**Տեղեկությունների փոխանակման շրջանակներում փոխանակման ենթակա տեղեկությունների ցանկը**

| Տեղեկության համարը | Տեղեկության անվանումը | Տեղեկության նկարագրությունը | Պարտադիր լինելը (1՝ պարտադիր է, 0՝ պարտադիր չէ) | Մի քանի արժեքներ նշելու հնարավորությունը | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հայտարարագրի նույնականացման համարը | Հայտարարագրի գրանցման համարը | 1 | | |
| 2 | Հայտարարագրի թողարկման ամսաթիվը | Հայտարարագրի գրանցման ամսաթիվը | 1 | | |
| 3 | Արտահանման երկիրը | Արտահանման երկրի ծածկագիրը՝ համաձայն ԻՍՕ 3166 դասակարգչի | 1 | | |
| 4 | Նշանակման երկիրը | Նշանակման երկրի ծածկագիրը՝ համաձայն ԻՍՕ 3166 դասակարգչի | 1 | | |

| Տեղեկության համարը | Տեղեկության անվանումը | Տեղեկության նկարագրությունը | Պարտադիր լինելը (1՝ պարտադիր է, 0՝ պարտադիր չէ) | Մի քանի արժեքներ նշելու հնարավորությունը | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 5 | Ապրանքների ընդհանուր թիվը | Հայտարարագրում հայտարարագրված ապրանքների/ապրանքային միավորների ընդհանուր թիվը (թվային արժեքը) | 1 | | |
| 6 | Բեռնառաքողը (արտահանողը) | Տեղեկություն որպես բեռնառաքող (արտահանող) նշված անձի/կազմակերպության վերաբերյալ | | | |
| 7 | Բեռը ստացողը (ներմուծողը) | Տեղեկություն որպես բեռը ստացող (ներմուծող) նշված անձի/կազմակերպության վերաբերյալ | 1 | | |
| 8 | Առաքման պայմանների ծածկագիրը | Տեղեկություն՝ առաքման պայմանների վերաբերյալ՝ համաձայն առաքման պայմանների դասակարգչի (Միջազգային առեւտրային պայմաններ 2000 եւ Միջազգային առեւտրային պայմաններ 2010), որը նշված է արտաքին առեւտրի մասին պայմանագրում (համաձայնագրում) | 1 | | |
| 9 | Փաթեթվածքների ընդհանուր թիվը | Հայտարարագրված ապրանքների փաթեթվածքների ընդհանուր թիվը | 1 | | |
| 10 | Համաքաշը՝ հայտարարագրման մակարդակով (կգ) | Բոլոր ապրանքների համաքաշը, ներառյալ՝ փաթեթվածքը | 1 | | Տրամադրվում է միայն Վիետնամի կողմից |
| 11 | Հաշիվ-ապրանքագրերում նշված ընդհանուր գումարը | Մաքսային հայտարարագրով մաքսային մարմնում հայտարարագրված ապրանքների՝ բոլոր հաշիվ-ապրանքագրերում նշված գումարների ընդհանուր գումարը | 1 | | |
| 12 | Հաշիվ-ապրանքագրերում նշված ընդհանուր գումարի արժույթի ծածկագիրը | Հաշիվ-ապրանքագրում նշված ընդհանուր գումարի արժույթի ծածկագիրը՝ համաձայն ԻՍՕ 4217 դասակարգչի | 1 | | |
| 13 | Տեղեկություն տրանսպորտային միջոցի վերաբերյալ | | 1 | Հնարավոր է նշել արժեքներ՝ տրանսպորտային միջոցի մի քանի տեսակների համար | |
| 13.1 | Տրանսպորտային միջոցի տեսակը | Տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը՝ ուղարկող կողմի ազգային դասակարգիչների համաձայն | 1 | | |

| Տեղեկության համարը | Տեղեկության անվանումը | Տեղեկության նկարագրությունը | Պարտադիր լինելը (1՝ պարտադիր է, 0՝ պարտադիր չէ) | Մի քանի արժեքներ նշելու հնարավորությունը | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 13.2 | Տրանսպորտային միջոցի նույնականացումը | Ճանապարհային տրանսպորտի դեպքում՝ տրանսպորտային միջոցի պետական գրանցման համարները. Երկաթուղային տրանսպորտի դեպքում՝ վագոնների (հարթակների, ցիստեռնների եւ այլնի) համարները. Ծովային (ջրային) տրանսպորտի դեպքում՝ նավերի անվանումները. Օդային տրանսպորտի դեպքում՝ չվերթների համարները | 0 | Հնարավոր է նշել արժեքներ՝ տրանսպորտային միջոցի մի քանի տեսակների համար | |
| 13.3 | Բեռնարկղերի նույնականացումը | Բեռնարկղերի նույնականացման համարները | 0 | Հնարավոր է նշել արժեքներ՝ մի քանի բեռնարկղերի համար | |
| 14 | Տեղեկություն ապրանքների վերաբերյալ | | 1 | Հնարավոր է նշել արժեքներ՝ մի քանի ապրանքների համար | |
| 14.1 | Հերթական համարը | Ապրանքի հերթական համարը՝ համաձայն հայտարարագրի | 1 | | |
| 14.2 | Ապրանքների դասակարգման ծածկագիրը | Տվյալ ապրանքի դասակարգման ծածկագիրը (8 կամ 10 նիշ)՝ համաձայն ուղարկող կողմի ազգային դասակարգիչների | 1 | | |
| 14.3 | Ապրանքների նկարագրությունը | Ապրանքների անվանումը (ապրանքային, առեւտրային կամ այլ ավանդական անվանումը), տեղեկություն՝ ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, առարկաների, աստիճանների, ստանդարտների եւ տեխնիկական ու առեւտրային այլ բնութագրերի վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություն՝ հայտարարագրված ապրանքների քանակական եւ որակական կազմի վերաբերյալ | 1 | | |
| 14.4 | Ծագման երկիրը | Ապրանքների ծագման երկրի ծածկագիրը՝ համաձայն ԻՍՕ 3166 դասակարգչի | 0 | | Կքննարկվի ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների փոխանակման պարտադիր լինելու հարցը եւ կդիտարկվի հետագա փուլերում Կողմերի կողմից դրա կիրառումը |
| 14.5 | Ապրանքային արժեքը | Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը | 1 | | |

| Տեղեկության համարը | Տեղեկության անվանումը | Տեղեկության նկարագրությունը | Պարտադիր լինելը (1՝ պարտադիր է, 0՝ պարտադիր չէ) | Մի քանի արժեքներ նշելու հնարավորությունը | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 14.6 | Ապրանքային արժեքի արժույթի ծածկագիրը | Ապրանքային արժեքի արժույթի ծածկագիրը՝ համաձայն ԻՍՕ 4217 դասակարգչի | 1 | | |
| 14.7 | Համաքաշը՝ ապրանքային միավորի մակարդակով (կգ) | Ապրանքների համաքաշը, ներառյալ փաթեթվածքը՝ առանց տրանսպորտային հարմարանքների | 1 | | Տրամադրվում է միայն Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից |
| 14.8 | Զտաքաշը՝ ապրանքային միավորի մակարդակով (կգ) | Հայտարարագրված ապրանքների զտաքաշը՝ առանց հաշվի առնելու որեւէ փաթեթվածք | 1 | | Տրամադրվում է միայն ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից |
| 14.9 | Ապրանքների քանակը | Ապրանքների քանակը (թվային արժեք) | 1 | | Տրամադրվում է միայն Վիետնամի կողմից |
| 14.10 | Ապրանքների քանակի միավորի ծածկագիրը | Ծածկագիրը՝ համաձայն միավորների դասակարգչի | 1 | | Տրամադրվում է միայն Վիետնամի կողմից |
| 14.11 | Տեղեկություն փաստաթղթերի վերաբերյալ | | 0 | Հնարավոր է նշել արժեքներ՝ մի քանի փաստաթղթերի համար | |
| 14.11.1 | Փաստաթղթի տեսակի ծածկագիրը | Ծածկագիրը՝ համաձայն մաքսային հայտարարագրման նպատակով օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչի | 0 | | |
| 14.11.2 | Փաստաթղթի համարը | Արտաքին առեւտրի մասին պայմանագրի համարը. Արտահանված ապրանքների հայտարարագրում նշված հաշիվ-ապրանքագրի համարը. Տրանսպորտային (տեղափոխման) փաստաթղթի համարը. Արտահանված ապրանքների հայտարարագրում նշված՝ ապրանքների ծագման վկայականի համարը | 0 | | |
| 14.11.3 | Փաստաթղթի ամսաթիվը | Արտաքին առեւտրի մասին պայմանագրի ամսաթիվը. Արտահանված ապրանքների հայտարարագրում նշված հաշիվ-ապրանքագրի ամսաթիվը. Տրանսպորտային (տեղափոխման) փաստաթղթի ամսաթիվը. Արտահանված ապրանքների հայտարարագրում նշված՝ ապրանքների ծագման վկայականի ամսաթիվը | 0 | | |

Կողմերը համաձայնել են դասակարգիչները փոխանակել՝ նախքան տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն սկսելը:

* Տեղեկությունների տրամադրումը պարտադիր է այն դեպքում, երբ դրանք հասանելի են մաքսային մարմիններին:».

4) ավելացնել հետևյալ խմբագրությամբ Հավելված 4.

«ՀԱՎԵԼՎԱԾ 4

«Եվրասիական տնտեսական
միության անդամ պետությունների
եւ Վիետնամի Սոցիալիստական
Հանրապետության կենտրոնական
մաքսային մարմինների միջեւ
«Եվրասիական տնտեսական
միության եւ դրա անդամ
պետությունների՝ մի կողմից, եւ
Վիետնամի Սոցիալիստական
Հանրապետության՝ մյուս կողմից,
միջեւ ազատ առեւտրի մասին»
2015 թվականի մայիսի 29-ի
համաձայնագրի 5.7 հոդվածի
համաձայն՝ տեղեկությունների
փոխանակման իրագործման
մասին» արձանագրության

**Արձանագրության 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման երկրորդ փուլի համար Համաձայնագրի կողմերի միջեւ շրջանառվող ապրանքների ցանկ**

Վիետնամական կողմը պետք է տեղեկություններ փոխանցի հետեւյալ ապրանքային միավորների վերաբերյալ՝

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 030752 | Կակղամորթներ՝ խեցու մեջ կամ առանց խեցու, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված. կակղամորթներ ապխտած՝ խեցու մեջ կամ առանց խեցու, |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| | | մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. ալյուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի.<br>- ութոտնուկ (Octopus spp.)՝<br>- - սառեցրած |
| 2 | 080132 | Հնդկընկույզներ, բրազիլական ընկույզներ եւ կեշյու ընկույզներ՝ թարմ կամ չորացրած, կճեպից մաքրած կամ չմաքրած, կեղեւով կամ առանց կեղեւի.<br>- կեշյու ընկույզներ՝<br>-- կճեպով |
| 3 | 090111 | Սուրճ՝ բոված կամ չբոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի. սուրճի կեղեւ եւ սուրճի հատիկների թաղանթ. սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճի պարունակությամբ.<br>- սուրճ չբոված՝<br>- - կոֆեինով |
| 4 | 090240 | Թեյ՝ համաբուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց.<br>- այլ սեւ թեյ (ֆերմենտացված) եւ այլ՝ մասնակիորեն ֆերմենտացված թեյ |
| 5 | 090411 | Piper ցեղի պղպեղ, Capsicum ցեղի կամ Pimenta ցեղի պտուղներ՝ չորացրած, մանրատած կամ աղացած.<br>- պղպեղ՝<br>- - չմանրատած եւ չաղացած |
| 6 | 090620 | Դարչին եւ դարչնածառի ծաղիկներ՝<br>- մանրատած կամ աղացած |
| 7 | 090961 | Անիսոնի, բադիանի, ֆենխելի, գինձի, հռոմեական քիմոնի կամ վոլոշյան քիմոնի կամ քիմոնի սերմեր. գիհու պտուղներ.<br>- անիսոնի, բադիանի, վոլոշյան քիմոնի կամ ֆենխելի սերմեր. գիհու պտուղներ՝<br>- - չմանրատած եւ չաղացած |
| 8 | 110814 | Օսլա, ինուլին.<br>- օսլա՝<br>- - օսլա մանիոկից (կասավայից) |
| 9 | 200110 | Բանջարեղեն, մրգեր, ընկույզներ եւ բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ<br>- վարունգներ եւ մանրավարունգներ |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
| --- | --- | --- |
| 10 | 200599 | Այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախ կամ քացախաթթու ավելացնելու, չսառեցված՝ բացի 20.06 ապրանքային դիրքում ընդգրկված մթերքներից.<br>- այլ բանջարեղեն եւ բանջարեղենի խառնուրդներ՝<br>- - այլ |
| 11 | 210310 | Մթերքներ՝ սոուսներ պատրաստելու համար, եւ պատրաստի սոուսներ. համային հավելումներ եւ խառը համեմունքներ . մանանեխի փոշի եւ պատրաստի մանանեխ.<br>- սոյայի սոուս |
| 12 | 210320 | Մթերքներ՝ սոուսներ պատրաստելու համար, եւ պատրաստի սոուսներ. համային հավելումներ եւ խառը համեմունքներ. մանանեխի փոշի եւ պատրաստի մանանեխ.<br>- տոմատային կետչուպ եւ այլ տոմատային սոուսներ |
| 13 | 210390 | Մթերքներ՝ սոուսներ պատրաստելու համար, եւ պատրաստի սոուսներ. համային հավելումներ եւ խառը համեմունքներ. մանանեխի փոշի եւ պատրաստի մանանեխ.<br>- այլ՝ |
| 14 | 320649 | Ներկող այլ նյութեր. տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված եւ 32.03, 32.04 կամ 32.05 ապրանքային դիրքերում ընդգրկված պատրաստուկներից տարբեր պատրաստուկներ. որպես լյումինաֆոր օգտագործվող անօրգանական արտադրանք՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության.<br>- ներկող այլ նյութեր եւ պատրաստուկներ՝<br>- - այլ |
| 15 | 550320 | Սինթետիկ մանրաթելեր՝ սանդերքագզման կամ սանրագզման չենթարկված կամ մանելու համար այլ նախապատրաստում չանցած.<br>- պոլիեթերային |
| 16 | 620342 | Կոստյումներ, կոմպլեկտներ, պիջակներ, բլեյզերներ, տաբատներ, կոմբինեզոններ՝ կրծկալներով եւ ուսակապերով, բրիջիներ եւ կիսատաբատներ (բացի լողի համար նախատեսվածներից)՝ տղամարդկանց կամ տղաների համար.<br>- տաբատներ, կոմբինեզոններ՝ կրծկալներով եւ ուսակապերով, բրիջիներ եւ կիսատաբատներ՝<br>- - բամբակե մանվածքից |
| 17 | 620349 | Կոստյումներ, կոմպլեկտներ, պիջակներ, բլեյզերներ, տաբատներ, կոմբինեզոններ՝ կրծկալներով եւ ուսակապերով, բրիջիներ եւ կիսատաբատներ (բացի լողի համար նախատեսվածներից)՝ տղամարդկանց կամ տղաների համար.<br>- տաբատներ, կոմբինեզոններ՝ կրծկալներով եւ ուսակապերով, բրիջիներ եւ կիսատաբատներ՝<br>- - այլ մանածագործական նյութերից |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 18 | 630533 | Պարկեր եւ տոպրակներ՝ ապրանքների փաթեթավորման համար. <br> - քիմիական մանածագործական նյութերից՝ <br> - - այլ, շերտերից կամ ժապավեններից կամ պոլիէթիլենի կամ պոլիպրոպիլենի նմանատիպ ձեւերից |
| 19 | 640411 | Կոշիկ՝ ռետինից, պլաստմասսայից, բնական կամ կոմպոզիցիոն կաշվից կոշկատակով եւ մանածագործական նյութերից կոշկերեսով. <br> - ռետինից կամ պլաստմասսայից կոշկատակով այլ կոշկեղեն՝ <br> - - մարզական կոշիկ. կոշիկ՝ թենիսի, բասկետբոլի, մարմնամարզության համար, մարզական եւ նույնանման կոշիկներ |
| 20 | 640419 | Կոշիկ՝ ռետինից, պլաստմասսայից, բնական կամ կոմպոզիցիոն կաշվից կոշկատակով եւ մանածագործական նյութերից կոշկերեսով. <br> - ռետինից կամ պլաստմասսայից կոշկատակով այլ կոշկեղեն՝ <br> - - այլ |
| 21 | 844331 | 84.42 ապրանքային դիրքում ընդգրկված թիթեղների, գլանների եւ այլ տպագրական ձեւերի միջոցով տպագրության համար օգտագործվող տպագրական մեքենաներ, միացված կամ չմիացված այլ տպիչներ, պատճենահան ապարատներ եւ ֆաքսիմիլային ապարատներ, դրանց մասերն ու պարագաները. <br> - այլ տպիչներ, պատճենահան ապարատներ եւ ֆաքսիմիլային ապարատներ՝ միացված կամ չմիացված, <br> - - մեքենաներ, որոնք ունեն երկու կամ ավելի գործառույթներ, ինչպիսիք են տպագրությունը, պատճենահանումը կամ ֆաքսիմիլային փոխանցումը, եւ ունեն տվյալների ավտոմատ մշակման մեքենային կամ ցանցին միանալու հնարավորություն. |
| 22 | 847160 | Տվյալների ավտոմատ մշակման մեքենաներ եւ դրանց մասերը, մագնիսական կամ օպտիկական հաշվարկման սարքվածքներ, մեքենաներ՝ տեղեկատվության տվյալները կրիչների վրա ծածկագրված տեսքով փոխադրելու համար եւ այդ տեղեկատվությունը մշակելու համար՝ այլ տեղում չնշված կամ չընդգրկված. <br> - ներանցման կամ արտանցման սարքվածքներ՝ նույն կորպուսում հիշող սարքվածքներ պարունակող կամ չպարունակող |
| 23 | 850720 | Էլեկտրական կուտակիչներ (ակումուլյատորներ), ներառյալ՝ դրանց համար զատիչները՝ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) կամ այլ ձեւի. <br> - այլ կապարաթթվային կուտակիչներ |
| 24 | 850811 | Փոշեկուլներ. <br> - ներկառուցված էլեկտրական շարժիչով՝ <br> - - 1500 Վտ-ից ոչ ավելի հզորությամբ եւ փոշու հավաքման համար պարկ կամ 20 լ-ից ոչ ավելի ծավալով այլ փոշեհավաքարան ունեցող |
| 25 | 850819 | Փոշեկուլներ. <br> - ներկառուցված էլեկտրական շարժիչով՝ <br> - - այլ |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 26 | 851712 | Հեռախոսային ապարատներ, ներառյալ՝ բջջային կապի ցանցերի կամ այլ առանց հաղորդալարի կապի ցանցերի համար հեռախոսային ապարատները, այլ ապարատուրա՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար, ներառյալ՝ հաղորդալարային կամ առանց հաղորդալարի ցանցում (օրինակ՝ կապի լոկալ կամ գլոբալ ցանց) հաղորդակցման համար ապարատուրաները՝ բացի 84.43, 85.25, 85.27 կամ 85.28 ապրանքային դիրքում ընդգրկված հաղորդող կամ ընդունող ապարատուրայից.<br>- հեռախոսային ապարատներ, ներառյալ՝ բջջային կամ այլ առանց հաղորդալարի կապի ցանցերի համար հեռախոսային ապարատները՝<br>- - հեռախոսներ՝ բջջային ցանցերի կամ այլ՝ առանց հաղորդալարի կապի ցանցերի համար |
| 27 | 851762 | Հեռախոսային ապարատներ, ներառյալ՝ բջջային կապի ցանցերի կամ այլ առանց հաղորդալարի կապի ցանցերի համար հեռախոսային ապարատները, այլ ապարատուրա՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար, ներառյալ՝ հաղորդալարային կամ առանց հաղորդալարի ցանցում (օրինակ՝ կապի լոկալ կամ գլոբալ ցանց) հաղորդակցման համար ապարատուրաները՝ բացի 84.43, 85.25, 85.27 կամ 85.28 ապրանքային դիրքում ընդգրկված հաղորդող կամ ընդունող ապարատուրայից.<br>- այլ ապարատուրա՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար, ներառյալ՝ կապի հաղորդալարային կամ առանց լարի ցանցում (օրինակ՝ լոկալ կամ գլոբալ ցանց) հաղորդակցման համար՝<br>- - մեքենաներ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների ընդունման, փոխակերպման եւ հաղորդման կամ վերականգնման համար, ներառյալ՝ կոմուտացիոն սարքվածքները եւ երթուղիչները՝ |
| 28 | 854231 | Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ.<br>- էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝<br>- - պրոցեսորներ եւ կոնտրոլերներ՝ միացված կամ չմիացված հիշող սարքվածքներով, կերպափոխիչներով, տրամաբանական սխեմաներով, ուժեղարարներով, սինխրոնիզատորներով կամ այլ սխեմաներով |
| 29 | 854239 | Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ.<br>- էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ՝<br>- - այլ |

ԵԱՏՄ կողմը պետք է տեղեկություններ փոխանցի հետեւյալ ապրանքային միավորների վերաբերյալ.

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 020629 | Խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի, ձիերի, ավանակների, ջորիների կամ կիսագրաստների սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած.<br>- խոշոր եղջերավոր անասունների, սառեցրած՝<br>- - այլ |
| 2 | 020714 | Ընտանի թռչունների միս եւ սննդային ենթամթերք՝ 01.05 ապրանքային դիրքում նշված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած.<br>- ընտանի հավերի (Gallus domesticus)՝<br>- - մասեր եւ ենթամթերք՝ սառեցրած |
| 3 | 030363 | Ձուկ սառեցրած՝ բացառությամբ 03.04 ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի եւ ձկան այլ մսի՝<br>- ձուկ՝ Bregmacerotidae, Euclichthyidae, Gadidae, Macrouridae, Melanonidae, Merlucciidae, Moridae եւ Muraenolepodidae ընտանիքների՝ բացի 0303.91-ից 0303.99 ենթադիրքերում նշված ձկան սննդային ենթամթերքներից՝<br>- - ձողաձուկ (Gadus morhua, Gadus ogac, Gadus macrocephalus) |
| 4 | 040210 | Կաթ եւ սերուցք՝ խտացրած, շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ<br>- փոշի, հատիկավոր կամ այլ պինդ ձեւով, 1.5 % զանգվածային բաժնից ոչ ավելի յուղի պարունակությամբ |
| 5 | 050510 | Թռչունների մորթիկներ եւ այլ մասեր՝ փետուրներով կամ աղվափետուրով, փետուրներ եւ փետուրների մասեր (կտրված կամ չկտրված եզրերով) եւ աղվափետուր՝ պահելու համար մաքրված, ախտահանված կամ մշակված, սակայն հետագա մշակման չենթարկված. փետուրների եւ դրանց մասերի փոշին եւ մնացուկները.<br>- թռչունների փետուրներ՝ խցկոնքի համար օգտագործվող, աղվափետուր |
| 6 | 151219 | Արեւածաղկի, քրքումի կամ բամբակի յուղ եւ դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց քիմիական կազմի փոփոխման.<br>- արեւածաղկի կամ քրքումի յուղ եւ դրանց զտամասերը՝<br>- - այլ |
| 7 | 170490 | Շաքարից պատրաստված հրուշակեղեն (ներառյալ սպիտակ շոկոլադը)՝ առանց կակաոյի պարունակության.<br>- այլ |
| 8 | 220860 | 80% ծավալային բաժնից ոչ պակաս սպիրտի խտությամբ չբնափոխված էթիլային սպիրտ, սպիրտային թրմօղի, լիկյորներ եւ սպիրտային այլ խմիչքներ.<br>- օղի |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 9 | 270111 | Քարածուխ, բրիկետներ, բովագնդեր եւ կարծր վառելիքի նույնանման տեսակներ՝ ստացված քարածխից՝<br>- քարածուխ՝ փոշեկերպ կամ ոչ փոշեկերպ, բայց ոչ ագլոմերացված՝<br>- - անտրացիտ |
| 10 | 270799 | Յուղեր եւ քարածխային ձյութի բարձր ջերմային թորման այլ նյութեր. նույնանման նյութեր, որոնց մեջ բուրավետ բաղադրիչների զանգվածը գերազանցում է ոչ բուրավետների զանգվածը.<br>- այլ՝<br>- - այլ |
| 11 | 283640 | Կարբոնատներ. պերօքսոկարբոնատներ (պերկարբոնատներ). ամոնիումի կարբոնատ տեխնիկական, ամոնիումի կարբամատի պարունակությամբ.<br>- կալիումի կարբոնատներ |
| 12 | 293371 | Հետերացիկլային միացություններ՝ միայն ազոտի հետերաատոմ(ներ) պարունակող.<br>- լակտամներ՝<br>- - 6-հեքսանլակտամ (էպսիլոն-կապրոլակտամ) |
| 13 | 300213 | Մարդկային արյուն. կենդանական արյուն՝ պատրաստված թերապեւտիկ, կանխարգելիչ կամ ախտորոշման նպատակներով օգտագործելու համար. իմունային շիճուկներ, արյան այլ թորամասեր ու իմունաբանական նյութեր՝ ձեւափոխված կամ չձեւափոխված, այդ թվում՝ բիոտեխնոլոգիական ճանապարհով ստացված. պատվաստանյութեր, թույներ, աճեցրած մանրէներ (բացի խմորասնկերից) եւ նույնանման նյութեր.<br>- իմունային շիճուկներ, արյան այլ թորամասեր ու իմունաբանական նյութեր՝ ձեւափոխված կամ չձեւափոխված, այդ թվում՝ բիոտեխնոլոգիական ճանապարհով ստացված.<br>- - իմունաբանական նյութեր՝ չխառնուրդված, մանրածախ վաճառքի համար դեղաչափված դեղաձեւերով կամ կաղապարներում կամ փաթեթվածքներում չբաժնեծրարված |
| 14 | 440711 | Անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղեւահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ավելի հաստությամբ.<br>- փշատերեւազգիներից.<br>- - սոճուց (Pinus spp.) |
| 15 | 440799 | Անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղեւահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ավելի հաստությամբ.<br>- այլ՝<br>- - այլ |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 16 | 470311 | Փայտանյութի թաղանթանյութ՝ նատրոնային կամ սուլֆատային՝ բացի լուծվող տեսակներից<br>- չսպիտակեցրած՝<br>- - փշատերեւազգիներից |
| 17 | 710231 | Ալմաստներ՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացրած.<br>- ոչ արդյունաբերական՝<br>- - չմշակված կամ պարզապես սղոցած, ճեղքած կամ կոպիտ մշակման ենթարկված |
| 18 | 720720 | Կիսապատրաստուկներ՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից՝<br>- 0,25% զանգվածային բաժնից պակաս ածխածին պարունակող |
| 19 | 720839 | Երկաթից կամ չլեգիրված պողպատից հարթ գլանվածք՝ 600 մմ կամ ավելի լայնությամբ, շիկագլոցված, չերեսապատված, առանց գալվանական կամ այլ ծածկույթի.<br>- գլանափաթեթներով, առանց հետագա մշակման՝ բացի տաք գլոցումից, այլ՝<br>- - 3 մմ-ից պակաս հաստությամբ |
| 20 | 722519 | Այլ լեգիրված պողպատից հարթ գլանվածք՝ 600մմ կամ ավելի լայնությամբ.<br>- սիլիցիումային էլեկտրատեխնիկական պողպատից՝<br>- - այլ |
| 21 | 730210 | Արտադրատեսակներ սեւ մետաղներից, որոնք օգտագործվում են երկաթուղային կամ տրամվայի գծերի համար. ռելսեր, զուգառելսեր եւ ատամնավոր ռելսեր, ուղեփոխման ռելսեր, խուլ փոխհատման ուղեփոխիչներ, ուղեփոխման մետաղաձողեր եւ այլ լայնական միացումներ, փայտակոճեր, կցվանքային մակադրակներ եւ տակդիրներ, սեպեր, հենասալեր, ռելսային կեռավոր հեղույսներ, բարձեր եւ առձգիչներ, հենոցներ, լայնադրակներ եւ այլ դետալներ՝ նախատեսված ռելսերի միացման կամ ամրացման համար.<br>- ռելսեր |
| 22 | 841480 | Պոմպեր՝ օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ եւ օդափոխիչներ, օդափոխիչ կամ վերաշրջանառու օդաքաշ թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, ֆիլտրերով կամ առանց ֆիլտրերի.<br>- այլ |
| 23 | 843143 | Մասեր՝ նախատեսված բացառապես կամ հիմնականում 84.25-84.30 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումների համար<br>- 84.26, 84.29 կամ 84.30 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաների կամ մեխանիզմների՝<br>- - 8430.41 կամ 8430.49 ենթադիրքի հորատող կամ հորատանցիչ մեքենաների մասեր |

| Համարը | Ծածկագիրը | Ապրանքների նկարագրությունը |
|---|---|---|
| 24 | 870422 | Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար՝<br>- այլ, սեղմումով բոցավառվող ներքին այրման մխոցային շարժիչով (դիզելով կամ կիսադիզելով)՝<br>- - 5 տ-ից ավելի, սակայն 20 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով |
| 25 | 870590 | Հատուկ նշանակության շարժիչային տրանսպորտային միջոցներ (օրինակ՝ բեռնատար ավտոմոբիլներ՝ վթարները վերացնելու համար, ավտոամբարձիչներ, հրշեջ տրանսպորտային միջոցներ, ավտոբետոնախառնիչներ, ճանապարհները մաքրող ավտոմոբիլներ, ջրող-լվացող ավտոմոբիլներ, ավտոարհեստանոցներ, ռենտգենյան կայանքներով ավտոմոբիլներ)՝ բացի ուղեւորներ կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցներից.<br>- այլ |
| 26 | 902000 | Շնչառական այլ սարքավորումներ եւ գազային դիմակներ՝ բացի առանց մեխանիկական դետալների եւ փոխովի ֆիլտրերի պաշտպանիչ դիմակներից |
| 27 | 902219 | Ապարատուրա՝ հիմնված ռենտգենյան, ալֆա, բետա եւ գամմա ճառագայթների օգտագործման վրա, բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական օգտագործման համար նախատեսված կամ չնախատեսված, ներառյալ՝ ռենտգենագրական կամ ռադիոթերապեւտիկ հետազոտությունների համար ապարատուրաները, ռենտգենյան խողովակները եւ ռենտգենյան ճառագայթման այլ գեներատորներ, բարձր լարման գեներատորները, վահանները եւ կառավարման վահանակները, էկրանները, սեղանները, բազկաթոռները եւ նույնանման այլ արտադրատեսակներ՝ հետազոտության կամ բուժման համար.<br>- ապարատուրա՝ հիմնված ռենտգենյան ճառագայթների օգտագործման վրա, բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական օգտագործման համար նախատեսված կամ չնախատեսված, ներառյալ՝ ռենտգենագրական կամ ռադիոթերապեւտիկ հետազոտությունների համար նախատեսված ապարատուրան.<br>- - այլ նպատակներով օգտագործման համար |
| 28 | 902690 | Սարքեր եւ ապարատուրա՝ հեղուկների կամ գազերի ծախսի, մակարդակի, ճնշման կամ այլ փոփոխական հատկանիշների չափման կամ հսկման համար (օրինակ՝ ծախսաչափեր, մակարդակի ցուցիչներ, ճնշաչափեր (մանոմետրեր), ջերմահոսաչափեր)՝ բացի 90.14, 90.15, 90.28 կամ 90.32 ապրանքային դիրքերում նշված սարքերից եւ ապարատուրայից.<br>- մասեր եւ պարագաներ |
| 29 | 902790 | Սարքեր եւ ապարատուրա՝ ֆիզիկական կամ քիմիական անալիզի համար (օրինակ՝ բեւեռաչափեր, բեկումաչափեր, սպեկտրաչափեր, գազա- կամ ծխաանալիզատորներ). սարքեր եւ ապարատուրա՝ մածուցիկության, ծակոտկենության, ընդարձակման, մակերեսային ձգունության չափման կամ հսկման համար կամ նույնանման սարքեր ու ապարատուրա. սարքեր եւ ապարատուրա՝ ջերմության, ձայնի կամ լույսի չափման կամ հսկման համար (ներառյալ էքսպոնոմետրերը), միկրոտոմներ.<br>- միկրոտոմներ. մասեր եւ պարագաներ»: |

**Հոդված 2**

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կատարված է Հանոյում 2022 թվականի մարտի 31-ին՝ վեց բնօրինակից՝ անգլերեն:

**Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անունից**

**Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի անունից**

**Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունից**

**Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության անունից**

**Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության անունից**

**Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարության անունից**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022թ. մարտի 31-ին քաղաք Հանոյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**